

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ-4

ՀՀ քննչական կոմիտեի կարիքների համար գնումների eauction.armeps.am համակարգի միջոցով վառելիքի ձեռքբերման նպատակով ձևավորված «ՀՀԲԿ-ԷԱՃԱՊՁԲ-Բ-19/2» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 08.08.2019թ. ժամը 12-00-ին, ՀՀ քննչական կոմիտեի վարչական շենքում, ք. Երևան, Մամիկոնյանց 46/5 հասցեում:

Նիստին մասնակցում էին գնահատող հանձնաժողովի նախագահ Գ.Արշակյանը, գնահատող հանձնաժողովի անդամներ Վ.Մկրտչյանը, Մ.Անտոնյանը, Է.Արշակյանը և քարտուղար Մ.Մուրադյանը:

1. Հայտերի գնահատման արդյունքները հաստատելու մասին

Գնահատող հանձնաժողովը, ուսումնասիրելով «Մաքս Օիլ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերն և ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացված եզրակացությունը/ կցվում է/, ներկայացրեց իր կողմից իրականացված հայտերի գնահատման արդյունքները՝ eauction.armeps.am համակարգի միջոցով, որի համաձայն «Մաքս Օիլ» ՍՊԸ-ի ներկայացված հիմնավորող փաստաթղթերում Հավելված 2-ը բացակայում է, բենզալցակայանների ցանկը ստորագրված և կքված չէ, ներկայացված է համատեղ գործնեությանը կատարված նմանատիպ պայամանագիր, սակայն ներկայացված չէ համատեղության պայմանագրերը:

Հանձնաժողովը՝ որոշեց.

1. ՀՀ կառավարության 18.05.2017թ. թիվ 534-ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի 23-րդ կետի համաձայն՝ մեկ աշխատանքային օրով կասեցնել նիստը, որպիսի «Մաքս Օիլ»-ն շտկի անհամապատասխանությունը: Հաջորդ նիստը հրավիրել 12.08.2019թ., ժամը՝ 11.00-ին, ՀՀ քննչական կոմիտեի վարչական շենքում, ք. Երևան, Մամիկոնյանց 46/5 հասցեում:

Հանձնաժողովի քարտուղարին՝

Համակարգի միջոցով այսօր «Մաքս Օիլ» ՍՊԸ-ին տեղեկացնել անհամապատասխանության մասին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

Մասնակցում էին

Հանձնաժողովի նախագահ  Գ.Արշակյան

Հանձնաժողովի անդամներ՝  Վ.Մկրտչյան

 Մ.Անտոնյան

 Է.Արշակյան

Հանձնաժողովի քարտուղար՝  Մ.Մուրադյան